ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 26-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 9-րդ մասերի, ՀՀ վարչապետի 11.06.2018թ. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 5-րդ, 7-րդ, 8-րդ և 25-րդ կետի 1-ին ենթակետերի

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մինչև ՀՀ ոստիկանության պետի իրավասու տեղակալի նշանակումը ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «ՀՀ ոստիկանության գործունեության բնագավառների, գործառույթների և դրանք ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների, ոստիկանության ենթակայությանը հանձնված կազմակերպությունների գործունեության համակարգումը ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի և նրա տեղակալների միջև բաշխելու, ինչպես նաև ՀՀ ոստիկանության պետի 14.07.2018թ. թիվ 2-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 25-Լ հրամանի հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով նախատեսված բնագավառներում իրականացվող աշխատանքների համակարգումը հանձնարարել ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Ա. Կիրակոսյանին:

2. ՀՀ ոստիկանության պետի խորհրդական Ա. Կիրակոսյանին՝ վերահսկել սույն հրամանի 1-ին կետում նշված բնագավառների համակարգման աշխատանքների շրջանակներում ՀՀ ոստիկանության պետի ժամանակավոր պաշտոնակատարի կողմից տրված հանձնարարությունների կատարումը:

3. Հրամանը հայտարարել ՀՀ ոստիկանության բարձրագույն, գլխավոր, ավագ և միջին խմբերի պաշտոններ զբաղեցնող ծառայողներին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ **Ա.ՍԱՐԳՍՅԱՆ**

«03» 12 2019թ.
ք. Երևան